| Գ. » » | 43 | 33 » | 12 » |
| Գումար | 115 | 115 հոգի | 12 հոգի |

Ուրեմն 115 աշակերտներից փոխադրւել են 103, մնացել են 12 հոգի, հետևաբար փոխադրւողները կազմում են 89, 5%։

Հաշւետարում Սօլօլակի բաժանմունքը թոշակաւորներ չէ ունեցել, չքաւորներին բաժանել է գրքեր և այլ դասական պիտոյքներ։

*Ազատ ընթերցանութիւն*

Սօլօլակի բաժանմունքը սեպհական գրադարան չունէր։ Այս պատճառով աւելի յարմար համարւեց Գ. պատրաստական դասարանի աշակերտների համար գրքեր առնել Սօլօլակի էժանագին գրադարանից։

| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թւականից է ծառայում նշեալ ուսումնարանում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Տէր-Միրաքեան Յովհ. | Թիֆ. ռէալ. դ. և Ենայի համալ. | 1906/7 | Ռուսաց լ., բնական գիտութիւն |
| Բաբասեան Յարութիւն | Գէորգ. ճեմ. | | Գ. պատրաստականի բոլոր առարկ. բացի ռ. լեզ. բնակ. գիտ., երկչափ. և նկար. |
| Տէր-Առաքելեան Միքայէլ | Գլորգ. ճեմ. | | Բ. պատր. դ. բոլ. առ. բացի երգեց. |
| Մեհրաբեան Արշակ | Գէորգ. ճեմարանի VI դաս. | | Ա. պատրս. դաս. բոլ. առարկաները |
| Շահմազեան Արսէն | Ն. դպր. և Թիֆ. գեղարւ. դ. | | Ջեռարուեստ |

Վարժոցում վարիչի պաշտօն կատարել է Յ. Տէր-Միրաքեանը։



Վարժոցում պարապմունք եղել է ընդամենը 119 օր։

պ. Բաբասեանը բացակայել է 41 դասից, պ. Մեհրաբեանը 12 դասից և Շահմազեանը 3 դասից։

Վարժոցի պարապմունքները խանգարւել են ուշ սկսւելու պատճառով. շէնքի նորոգութիւնը վերջացաւ հոկտեմբերի 16-ին, ապա քոլերի պատճառով դասերն ընդհատւեցին դեկտեմբերի 18-ին և վերսկսւեցին յունվարի 16-ին։

*Մանկավարժական ժողովներ*

Վարժոցի մանկավարժական ժողովները մինչև նոյեմբերի 26-ը նախապատրաստական բնաւորութիւն են ունեցել։ Այդ օրւանից, երբ նախ ուսուցիչներն սկսեցին փորձնական դասեր տալ, ժողովների կազմի մէջ մտան նաև ուսուցչացուները և նիստերն այս օրւանից նուիրւեցին գլխաւորապէս ուսուցիչների և ապա նաև ուսուցչացուների փորձնական դասերի քննադատութեանը։ Այս կարգի քննադատական ժողովներ տեղի են ունեցել 18 անգամ 22 փորձնական դասերի համար։ Վերջին մանկավարժական ժողովը նուիրւել է աշակերտների փոխադրութեան խնդրին։

*2. Մանկավարժական VII դասարանը*

Այս դասարանում աշակերտների թիւը տարւայ սկզբին եղել է 60, վերջը մնացին 50 հոգի։

Այս աշակերտներից միայն 9 թիֆլիսեցի էին, միւսները գաւառացիներ էին, որոնցից 6 Տաճկահայաստանից էին։

Սրանցից արհեստաւորների որդիներ էին 16 հոգի, վաճառականների 11, երկրագործների 10, հոգևորականների 7, բանւորների 3 և կալւածատէրերի 2, ուսուցչի 1։

Քննութեամբ աւարտողները հետեւեալ 6 աշակերտներն էին։

1. Յարութիւնեան Ստեփան
2. Սարգսեան Հայկ
3. Սիմէօնեան Սարգիս
4. Վանցեան Արտաշէս
5. Տէր Սիմէօնեան Գարեգին
6. Ծուղուրեան Սիմէօն

Հետեւեալ աշակերտները վկայական ստացան մանկավարժական գործնական պարապմունքներ ունեցած լինելու և աւանդած առարկաներից դասեր լսած լինելու մասին.

1. Աթաբէգեան պատւական
2. Աթանասեան Պարոյր
3. Ալիխանեան Յակոբ
4. Բաղալեան Տիգրօն
5. Անտոնեան Անտօն
6. Բաղդասարեան Աղէքսանդր
7. Բուդուրեան Սարգիս
8. Գալստեան Աղէքսանդր
9. Էյվազեան Կարապետ
10. Թովմասեան Վաղարշակ
11. Խիզանեան Գարեգին
12. Ինճիկեան Գրիգոր
13. Հայրապետեան Գէորգ
14. Ղազարեան Գրիգոր
15. Ղորղանեան Աւթանդիլ
16. Մատինեան Արտաշէս
17. Մելիք-Փաշայեան Վահան
18. Մելիքսեդեկեան Արշակ
19. Մելքոնեան Արամ
20. Միրզայեան Միքայէլ
21. Մուշեղեան Նիկողայոս



22. Յովհաննիսեան Մկրտիչ
23. Յովհաննիսեան Պետրոս
24. Նազանեան Սուրէն
25. Պապովեան Յովհաննէս
26. Սարգսեան Աստուածատուր
27. Վանցեան Լեւոն
28. Տէր Աւագեան Արշակ
29. Տէր Սարգսե ան Ալլահվերդի
30. Տէր Բարսեղեան Գեղամ
31. Տէրունեան Պարոյր։

Մնացած հետեւեալ աշակերտները վկայական ստացան միայն դասերը լսած լինելնուն մասին։

1. Աղայեան Մուշեղ
2. Առաքելեան Վարդան
3. Եղիազարեան Ներսէս
4. Երիցեան Ռաֆայէլ
5. Կարապետեան Սարգիս
6. Հացագործեան Արսէն
7. Կուլիկեան Միհրան
8. Ամսէյեան Տիգրան
9. Մալխասեան Սեդրակ
10. Ջուբարեան Գրիգոր
11. Վարդանեան Յովհաննէս
12. Քոչարեան Յովսէփ
13. Ոսկերչեան Միհրան։

Այս տարւայ աննօրմալ հանրածանօթ պայմանները, որոնք այնպէս խռովել էին մեր երկրի բոլոր դպրոցների խաղաղ ընթացքը, պատճառ եղան նաև մեր աշակերտներից ոմանց իրենց անմիջական պարտականութիւնների մէջ թերանալուն։

Ուսուցչացուներից նրանք, որ ուշադրութեամբ հետեւեցին մանկավարժութեան դասերին և ջանացին այս տեսցին կամանագիտութեան տեսականը գործադրել վարժոցում, կամանագիտութեան տեսականը գործադրել վարժոցում, կ-

կան պաշար ձեռք բերին իրենց ապագայ մանկավարժական գործունէութեան համար։

## VII ԴԱՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր գպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է դասաւանդում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| 1. Տիգրանեան Սիրական | Թիֆլ. I գիմն. և Պետրբ. համալ. | 1906 | Հոգեբանութիւն |
| 2. Յովհաննիսեան Միքայէլ | Շուշ. ռէալ. գ. և Ժնևի համալ. | 1906 | Սոցիոլօգիա |
| 3. Մանանդեան Յակոբ | Թիֆլ. I գիմն. և Պետրբ. համալ. | 1906 | Ընդհ. գրականութիւն |
| 4. Խաժակեան Գաբրիել | Գէորգ. ճ. VI դ. և Ժն. համալս. | 1904 | Քաղաքատնտեսութիւն |
| 5. Տէր Միրաքեան Յովհաննէս | Թիֆլ. ռէալ. դ. և Ենայի համալս. | 1906 | Մանկավարժութիւն |

VII. դասարանի ուսուցչական խմբի մանկավարժական ժողովները նուիրել են գլխաւորապէս աշակերտների պարապմունքները կանոնաւորելուն և տարւայ վերջը քննութիւններին։

Գ.

## ՀԱՒԱՔԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ 1906-1907 ՈՒՍՈՒՄ. ՏԱՐԻԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Տարւայ սկիզբը ընդունել են 259 աշակերտ, յունվարին 4։ Տարւայ ընթացքում 3 հոգի աշակերտներից մեռել են և 2 հոգի իրենց կամքով թողել են դպրոցը, այնպէս որ տարւայ վերջը աշակերտների թիւը 258 էր, եղաւ։ Դպրոցում ընդամենը 6 դասարան կար ու ր աշակերտները զետեղուած էին այսպէս.



Ա. հ և Ա. գ. պատր. դասարաններում 89 հոգի
Բ. հ և Բ. գ. » » 73 »
Գ. » » 44 »
I դասարանում » » 52 »

Ընդամենը 258

Թիֆլիս քաղաքը տուել է 138 աշակերտ, Թիֆլիսի նահանգը (առանց քաղաքի) 52, Գանձակի նահանգը 12, Երևանի նահանգը՝ 24, Ղարսի շրջանը՝ 6, Բաթումը՝ 2, Բագուն՝ 3, Զաքաթալան՝ 2, Հիւսիս. Կովկասը 1, Պարսկաստանը՝ 3 և Տաճկաստանը՝ 15։

Ըստ ծնողների կոչման աշակերտները բաժանւում են այսպէս.

Արհեստաւորների որդիք . . 78 հոգի
Վաճառականների » . . 75 »
Ծառայողների » . . 16 »
Երկրագործների » . . 24 »
Բանուորների » . . 45 »
Հոգևորականների » . . 15 »
Աստիճանաւորների » . . 3 »
Ուսուցիչների » . . 2 »

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

| Դասարաններ | Աշակերտների թիւը | Փոխադրւում են | Մնում են | Արձակւում են |
|---|---|---|---|---|
| Ա. հ. և Ա. գ. պ. | 89 | 62 | 27 | — |
| Բ. » » Բ. » » | 73 | 40 | 32 | 1 |
| Գ. » պատրս. դաս. | 44 | 28 | 14 | 2 |
| I. դասարան | 52 | 44 | 8 | — |

Հալաբարի բաժանմունքը թոշակաւորներ չէ ունեցել, միայն չքաւոր աշակերտները ձրիապէս ստացել են գրքեր և այլ դասական պիտոյքներ։

Հալաբարի բաժանմունքը սեփհական գրադարան չէ ունեցել։ Մանկավարժական ժողովի որոշմամբ մայր դպրոցի գրադարանից փոխադրուել են մանկական ընթերցանութեան գրքեր թւով 237 և աշակերտներին ազատ ընթերցանութեան համար բաշխուել։

Հալաբարի բաժանմունքում պարապմունքներն սկսուել են շատ ուշ նոյեմբերի 12-ին դպրոցական շէնքի վերանորոգման պատճառով և վերջացել են մայիսի 19-ին։ Պարապած օրերի թիւն եղել է 110։

---



## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է ծառայում նրանում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Աբեղ՚ան Յովսէփ | Ներս. դպրոց | 1906 թուականից | Երգ., կրօն., հ. լ. |
| Աւետեան Սեդր. | Խարկովի համլ. | | Ռուսաց լեզու |
| Թոփչեան տ. Հրանոյշ | Ալէքս. պրգմ. և ուս.ց. Բերլինի | | Թւաբ., իրագն., |
| | Հումբ. կուրս. | | |
| Թումանեան Աշոտ | Ներս. դպրոց | | Կրօնագ., պատմ. հայոց լեզու |
| Ղօրղանեան Լևոն | Գէորգ. ճեմ. | | Կրօնագ., աշխր., հայոց լեզու |
| Շահմազեան Արսէն | Ներս. դպրոց | | Նկարչութ., ձեռարւեստ |
| Շահվերդեան օր. Օսաննա | Օր. գիմնազիա | | Ռ. լեզու, թւաբ. |
| Սահակեան Արամ | Ներս. դպրոց | | Թւաբ., իրագն., բնագ. և ձևագիտ. |

Վերակացուի պաշտօն կատարում էին երկու հոգի։

### Ուսուցիչների Բացակայութիւնները

Աբազեան բացակայել է 3 օր, Աւետեան՝ 2 օր, տ. Թոփչեան՝ 4 օր. Թումանեան՝ 3 օր, Ղօրղանեան՝ 1 3 օր, Շահմազեան՝ 1 օր, օր. Շահվերդեան՝ 1 1 օր և Սահակեան 2 օր։ Բաց թողած դասերի փոխարէն բոլոր ուսուցիչները պարապել են աւելորդ դասեր, բացակայ ուսուցիչների դասերը պարապել են նրանց ազատ ընկերները։

## Մանկավարժական ժողովներ

Մանկավարժական խորհուրդը տարւայ ընթացքում ունեցել է 12 նիստ բոլոր ութ ուսուցիչների ներկայութեամբ։ Ժողովների խորհրդածութեան առարկայ եղել են հետևեալ խնդիրները. 1) նոր աշակերտների ընդունելութեան, 2) կարգապահութեան վերաբերեալ խնդիրներ, 3) դասագրքերի ընտրութիւն, 4) աշակերտների յառաջադիմութեան ու վարքի գնահատութեան, 5) ընթերցանութեան գործի կազմակերպութիւն և այլն։ Բացի պաշտօնական ժողովներից ուսուցչական խումբը շատ անգամ ունեցել է նաև մասնաւոր խորհրդակցութիւններ այս կամ այն դպրոցական խնդրի մասին։

## Բժշկական տեղեկագիր Ներսիսեան Հոգևոր դպրանոցի Սօլօլակի բաժանմունքի 1906/7 ուսումնական տարւայ

Բժիշկը շաբաթը երեք անգամ այցելում էր մայր դպրանոցը և երկու անգամ Սօլօլակի բաժանմունքը և որոշ ժամեր ընդունում էր հիւանդ աշակերտներին, ուսուցիչներին և ծառայողներին, ծանր հիւանդների այցելում էր տանը։

Ներսիսեան դպրանոցում հաշւետարում որպէս և առաջները աշակերտների կեանքի պայմանները բժշկական և առողջապահական տեսակէտից թէ դպրանոցի ներսը և թէ դպրանոցից դուրս շատ ծանր են եղել։

Այդ ժամանակամիջոցին բժշկական օգնութեան գործը բարդացաւ և մի այլ հանգամանքով։ Քաղաքում սկսւեց տարածւել տարափոխիկ քութէշ հիւանդութիւնը և որովհետև Ներսիսեան դպրանոցի աշակերտների մէջ ևս



եղան հիւանդութեան դէպքեր թւով մօտ տասը, ուստի և դպրանոցի պարապմունքները բժշկի առաջարկութեամբ ընդհատւեցին մի ամիս ժամանակով—այն է 1906 թ. դեկտեմբերի 15-ից մինչև 1907 թ. յունվար ամսի 15-ը։ Այդքան ժամանակամիջոց ընդհատւեցան քաղաքի մէջ գոյութիւն ունեցող և միւս դպրոցների պարապմունքները։

Հաշւետւութեան ժամանակամիջոցին Թոքախտի նըշաններով հիւանդացել են բարձր դասարանի 3 աշակերտներ, որոնք ուղարկւել են իրանց ծննդավայրը՝ գիւղերը, մի աշակերտի ձախ ուսի ոսկրը—իբրև հետևանք օսդէօմալացիա տկարութեան—ընկերների հետ խաղալիս անզգոյշ շարժումից կոտրւեց և բաւականին ժամանակ կանոնաւորապէս բժշկւելով՝ կարողացաւ կատարելապէս առողջանալ։

## Դպրոցների հիւանդական դրութիւնը

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԻՒԸ

| | Մայր դպրանոց | Սօլօլակի բաժանմունք | Հաւլաբարի բաժանմունք |
|---|---|---|---|
| Քութէշ | 10 | 6 | 2 |
| Ճնչառութեան գործ. հիւանդ. | 574 | 326 | 215 |
| Արեան շրջանառութեան | 153 | 96 | 83 |
| Ստամոքսի և աղիքի խանգարում | 442 | 325 | 232 |
| Արեան պակասութեան | 214 | 163 | 113 |
| Մաշկի հիւանդութեան | 45 | 86 | 24 |
| Քամի (ревматизмъ) | 185 | 106 | 93 |
| Վէրքեր | 52 | 60 | 18 |

| | | | |
|---|---|---|---|
| Մալարիա և ինֆլուէնցիա | 312 | 169 | 132 |
| Աչքի հիւանդութեան | 64 | 45 | 34 |
| Ականջի | 37 | 20 | 18 |
| Քթի հիւանդութիւն | 15 | 14 | 9 |
| Ներվային հիւանդութիւն | 87 | 38 | 44 |
| Փորի ճիճուներ | 35 | 60 | 17 |
| Ատամնացաւ | 47 | — | 14 |
| Թոքախտ | 3 | | — |
| | 2175 | 1551 | 1050 |

Այս թւերը ցոյց են տալիս այցելութիւնների քանակը որ է՝ 3325։ Այս թւի մէջ մանում են նաև բժշկի այցելութիւնները տներում։

Դ.

## ՄԱՅՐ ԴՊՐՈՑԻ 1907-1908-ՈՒՄ. ՏԱՐՒԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

### I.

### ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ուսումնական տարւայ ընթացքում մայր դպրոցում զետեղւած էին II. դասարանից սկսած մինչև VII դասարանը, որոնց թիւը զուգընթացներով համնում էր տասնի. երեք II, երկու III, երկու IV, մէկ V, մէկ VI և մէկ VII։ Ուսումնական տարւայ սկզբին դպրոցում կային 356 աշակերտ, յունւարին ընդունւել են 5 աշակերտ, տարւայ ընթացքում դըպրոցից դուրս են գնացել հիւանդութեան և այլ պատճառներով 22 աշակերտ, այսպիսով հաշւետարւայ վերջը կային ընդամենը 339 աշակերտ։ Դասարաններում աշակերտները բաժանւած էին այսպէս.

II, II զ, II. զ. բ. դասարաններում 128 հոգի
III. հ, և III. զ, » 62 »



IV և. IV զ. դասարաններում 66 հոգի
V դասարանում 31 »
VI » 40 »
VII » 12 »

Ընդամենը 339

Աշակերտների ընդհանուր թւից Թիֆլիսեցիներ են 86 հոգի, Թիֆլիսի նահանգից՝ 54, գաւառացիներ՝ 140, Թիւրքիայից՝ 37, և Պարսկաստանից 23 հ. Մայր դպրոցի աշակերտների կէսից աւելին կամ Թիֆլիս քաղաքից են կամ Թիֆլիսի նահանգից։

Ծնողների կոչումը

Ըստ ծնողների կոչման աշակերտները բաժանւում էին հետևեալ կարգերի.

| | | | |
|---|---|---|---|
| Արհեստաւորների | որդիք | 99 | հոգի |
| Վաճառականների | » | 94 | » |
| Հոգևորականների | » | 37 | » |
| Երկրագործների | » | 66 | » |
| Սորբին ծառայողների | » | 35 | » |
| Աստիճանաւորների | » | 3 | » |
| Ուսուցիչների | » | 5 | » |

### ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

| Դասարաններ | Աշակերտների թիւը | Փոխադրւում են | Մնում են |
|---|---|---|---|
| II, II զ. II զ. բ. | 128 | 96 հոգի | 32 հոգի |
| III հ. III զ. | 62 | 43 » | 19 » |
| IV հ. IV զ. | 66 | 43 » | 23 » |
| V | 31 | 24 » | 7 » |
| VI | 40 | 35 » | 5 (քննելի) |
| VII | 12 | 12 » | |

Այսպիսով 339 աշակերտներից փոխադրւում են 253 աշակերտ, այսինքն 74,6 %, աւարտել են 35 աշակերտ, մնացել են 86 աշակերտ, այսինքն 254 %.

VI. դասարանի 35 աշակերտներն ստացել են աւարտական վկայագիր, իսկ 5 հոգի քննելի են։ VII դասարանի բոլոր 12 աշակերտներն ստացել են առանձին աւարտական վկայագրեր։

Մանկավարժական ժողովը հաւատացած է, որ եթէ առաջիկայ տարին ևս լինի աշխատանքի կարգի մի տարի, որպիսին եղաւ անցածը, անկասկած աշակերտների տարեկան առաջադիմութեան ընդհանուր պատկերը, կը փոխուի յօգուտ դպրոցական գործի, յօգուտ աշակերտութեան։ Նախընթաց երկու տարիներում աշխատանքի պատրաստակամութիւնը, սովորելու անվերապահ ցանկութիւնը չափազանց թուլացած էր աշակերտութեան մէջ, որպէսզի կարելի լինէր մի տարուայ թէկուզ եռանդուն աշխատանքով, կանոնաւոր պարապմունքներով հասնել ցանկալի հետևանքի։

### Չքաւոր աշակերտներին օժանդակութիւն

Հաշւետարում դպրոցն օգնել է չքաւորներին պահելով թոշակաւորներ, ամենաչքաւորներին ձրի ճաշ է տուել, գրքեր է բաժանել։

Թոշակաւորների թիւն եղել է 75, ձրի ճաշ ստացողներինը՝ 20։

### Գ ր ա դ ա ր ա ն

Առ 1-ն սեպտեմբերի 1907 թ. դպրոցի գրադարանում եղել է ընդամենը 1971 անուն հայերէն և 1713 անուն ռուսերէն գիրք։ Հաշւետարուայ ընթացքում ձեռք են բերուած 382 անուն հայերէն և 370 անուն ռուսերէն գիրք։ Տարուայ ընթացքում գրադարան մտել է 425 անուն հայերէն և 581 անուն ռուսերէն, ընդամենը 1006 անուն գիրք։



Պ. գրադարանապետի տուած տեղեկութիւններից երեւում է, որ II—VII դասարանների բոլոր աշակերտներն օգտուել են դպրոցի գրադարանից և կարդացել են 4830 գիրք, այսինքն միջին թւով իւրաքանչիւր աշակերտ 14 գիրք։

Այս կարդացած գրքերից 3310 հայերէն, 1732 ռուսերէն, 14 գերմաներէն և 11 ֆրանսերէն են եղել։

Գրադարանից 250 աշակերտ ստացել են նաև 8634 ձրի դասագրքեր։ Ամառուայ համար ընթերցանութեան գրքեր տրուել են բարձր դասարանների աշակերտներին, իսկ դասագրքեր՝ բոլոր վերաքննուողներին։

### 1907-1908 թւականի VI. դասարանի ընթացաւարտները

1. Ամիրջանեան Տիգրան—Վաշլեանցի
2. Գուլոյեան Նիկար—Պարսկաստանցի
3. Դարբինեան Մատթէոս—Շամշադնեցի
4. Երամեան Լևոն—Թիֆլիսեցի
5. Երկանեան Սմբատ—Կարնեցի
6. Թորոսեան Թէոդորոս—Ախալցխացի
7. Թումանեան Սեդրակ—Ագուլեցի
8. Թափչեան Յակոբ—Ալէքսանդրապօլցի
9. Խանազատեան Հրանդ—Ղարաքիլիսեցի
10. Կարապետեան Գարեգին—Հին-Նախիջևանցի
11. Կարապետեան Ներսէս—Վանեցի
12. Ղօլթուխչեան Լևոն—Կարսեցի
13. Մահտեսի-Մկրտչեան Յակոբ—Հին-Նախիջևանցի
14. Մայիլեան Մելիք—Շամշադնեցի
15. Մանուկեան Երւանդ—Վաղարշապատցի
16. Մարգարեան Հմայեակ—Հին-Նախիջևանցի
17. Մեսեան Զաքարիա—Դաղէթցի
18. Յարութիւնեան Յովհաննէս—Թիֆլիսեցի
19. Նազարբէգեան Արտաշէս—Թաւրիզեցի

20. Շահվերդեան Արամ—Այգեձորցի
21. Շահվերդեան Արմենակ—Այգեձորցի
22. Զիլինգարեան Խաչատուր—Ղազախեցի
23. Պետրոսեան Սրապիոն—Ալէքսանդրապօլցի
24. Սողոմոնեան Վահան—Մակուեցի
25. Վարդանեան Վարդան—Պարսկաստանցի
6. Տէր-Անանեան Արշալոյս—Շամշադնեցի
27. Տէր-Աւետիսեան Կամսար—Ղազախեցի
28. Տէր-Աւետիքեան Յովհաննէս—Գանձակեցի
29. Տէր Խաչատրեան Սերովբ—Ղազախեցի
30. Տօնիեան Արամ—Նուխեցի
31. Փանոսեան Յակովբ—Կարսեցի
32. Գօլանճեան Մինաս—Կարնեցի
33. Մեհրաբեան Արամ—Թիֆլիսեցի
34. Վարդանեան Աղեքսանդր—Ծօճկանեցի

VII Դասարանի ընթացաւարտները

1. Ազատեան Թադէոս—Համամլուեցի
2. Աւետիսեան Սարգիս—Թիֆլիսեցի
3. Գումշայեան Մկրտիչ—Արմաւիրցի
4. Զաքարեան Արշակ—Տաճկաստանցի
5. Թուրազեան Վահան—Թիֆլիսեցի
6. Իգիթխանեան Կարապետ—Կարնեցի
7. Ղազարեան Անուշաւան—Շուլաւէրցի
8. Մելիքեան Երուանդ—Թիֆլիսեցի
9. Յովհաննիսեան Սարգիս—Շուշեցի
10. Ռեազեան Գրիգոր—Թիֆլեսեցի
11. Ստեփանեան Մկրտիչ—Վաղարշապատցի
12. Մատթէոսեան Մատթէոս—Երևանցի



Էքստերն (վերջնական) քննուողներից ատեստատ ստա-
նալուն արժանացել են

1. Բասմաճեան Գեղամ—Ալաշկերտցի
2. Սարգսեան Արմենակ—Պարսկաստանցի
3. Շահնազարեան Սարգիս—Նուխեցի
4. Մինասեան Առաքել—Ախալցխացի
5. Թադոսեան Յովհաննէս—Տաճկաստանցի

Բացի սրանցից անցեալ 1906/7 ուս. տար. վերաքն- նութիւն ունեցողներից VI. դ. աւարտել է Փուրթոյեան Լևոնը—Թիֆլիսեցի։

II

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է դասաւանդում ուսումնարանում. | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Ահարոնեան Աւետիս | Գէորգ. ճեմար. և Լօզանի համալսարան | 1907 | Հայոց նոր գրականութիւն |
| Աբեղեան Արտաշէս | Գէորգեան ճեմար. և Մարբ. համալսարան | 1905 | Գերմ. լեզու. կրօնների պատմութիւն |
| Ասիլեան Միսաք | Գէորգեան ճեմարան | 1886 | Հայոց լեզու, հայոց պատմ. հայաստ. աշխարհագրութ. |
| Արծրունի Վահան, բժիշկ | Թիֆլ. I գիմնազ. և Պարիզի համալսարան | 1907 | Առողջապահութիւն, բնախօսութիւն |
| Բաբայեան Լևոն | Շուշու թեմական դպրոց և Լայպցիգի համալսարան | 1906 | Ընդհ. պատմութիւն |
| Գիւզալեան Տիգրան | Մոսկվ. Պետրով. ճեմարան | 1906 | Բուսաբանութիւն |
| Ջոհրաբեան Յարութիւն | Կիևի համալ. | 1886 | Հանրահաշիւ |



| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է դասաւանդում ուսումնարանում. | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Լիսիցեան Ստեփան | Վարշավայի համալսարան | 1894 | Հայոց պատմութիւն, ռուսաց պատմութիւն, ընդհ. պատմութիւն, ռուսաց լեզու |
| Խաժակնեան Գարեգին | Գէորգեան ճեմարան, Ժնևի համալսարան | 1904 | Ֆրանս. լեզու, քաղաքատնտեսութիւն |
| Խուցեան Սարգիս սարկաւագ | Գէորգեան ճեմարան | 1901 | Կրօն |
| Մալխասեան Ստեփան | Գէորգեան ճեմարան և Պետերբուրգի համալսարան | 1890 | Հայոց հին գրականութիւն, հայոց լեզու |
| Մինասեան Արշակ քահանայ | Ներս. դպրոց և Ստրասբուրգի համալսարան | 1899 | Կրօնագիտութիւն |
| Միրզայեան Գրիգոր | Գէորգեան ճեմարան և Պետերբուրգի երաժշտ. ճեմար. | 1905 | Երաժշտութիւն |
| Մուշայեան Միքայէլ | Օդեսսայի համալսարան | 1906 | Ֆիզիկա, քիմիա, երկչափ. |

| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է ծառայում ուսումնարանում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Յարութիւնեան Իսահակ | Ներս. դպրոց և Ենայի համալսարան | 1888 | Հոգեբանութիւն, հայոց լեզու |
| Տամշինեան Աւետիք | Պետերբուրգի գեղարւ. ճեմ. | 1884 | Նկարչութիւն |
| Շխեան Սեմէօն | Թիֆլիսի Ալէքսանդ. ինստ. և Ժնևի համալսարան | 1898 | Ռուսաց լեզու |
| Հովսէփեան Պօղոս | Ներս. դպրոց և Գէորգեան ճեմարան | 1897 | Թւաբանութիւն |
| Սեղբոսեան Ղևոն | Գէորգեան ճեմարան, Լայպցիգի համալ. | 1906 | Հայոց լեզու և նոր գրականութիւն, ընդհանուր պատմութիւն |
| Տէր-Միրաքեան Յովհաննէս | Թիֆլիսի րէալ. դպրոց և Ենայի համալսարան | 1906 | Մանկավարժութիւն |
| Փիրումեան Տիգրան | Ներսիսեան դպրոց | 1894 | Ընդհանուր պատմութիւն |



| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է ծառայում ուսումնարանում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Քարիմեան Համբարձում սարկաւագ | Ներսիսեան դպրոց | 1896 | Գեղագրութիւն |
| Քափանակեան Ստեփան | Լազարեան ճեմարան և Մոսկվայի համալսարան | 1900 | Ռուսաց լեզու |

Վերատեսչի պաշտօն կատարել է Աւետիս Անդրոնեանը։ Վերակացութիւնը յանձնուած է եղել երեք վեբակացուների։

Ամբողջ տարւայ ընթացքում լրիւ պարապմունք եղել է 170 օր կամ 28 շաբաթ։ Ուսուցիչների բացակայութեան ցուցակը հետևեալն է.

---

| Ուսուցիչների ազգանուն-ները | Անլորդ պարապած դասերի թիւը | Զպարապած դասերի թիւը | Քանի անգամ է ուշացել |
|---|---|---|---|
| Ահարոնեան Աւետիս | 4 | 21 | -- |
| Աբեղեան Արտաշէս | 1 | 6 | 1 |
| Սաֆլեան Միսաք | — | 1 | — |
| Արծրունի Վահան բժ. | — | 12 | 2 |
| Բաբայեան Լեոն | — | 8 | — |
| Գիւզալեան Տիգրան | 15 | 35 | 2 |
| Ջոհրաբեան Յարութիւն | — | 19 | 1 |
| Խաժակեան Գարեգին | — | 38 | 3 |
| Խուցեան Սարգիս սարկաւագ | 1 | — | -- |
| Հովուեան Պօղոս | 1 | — | — |
| Լիսիցեան Ստեփան | 34 | 6 | 3 |
| Մալխասեան Ստեփան | 6 | 9 | — |
| Մինասեան Արշակ քահ. | 1 | 18 | 1 |
| Միրզայեան Գրիգոր | 8 | 54 | 5 |
| Մուչայեան Միքայէլ | 1 | 15 | 6 |
| Յարութիւնեան Իսահակ | — | 30 | — |
| Շխեան Սիմէօն | 10 | 25 | — |
| Շամշինեան Աւետիք | — | 36 | 4 |
| Տէր-Միրաքեան Յովհան. | — | 1 | — |
| Փիրումեան Տիգրան | — | — | — |
| Քարիմեան Համբարձում սարկաւագ | 2 | 5 | — |
| Քափանակեան Ստեփան | — | 2 | — |
| Սեղբոսեան Լեոն | — | 33 | — |



## Մանկավարժական ժողովներ

1907-1908 ուսում. տարւայ ընթացքում ժողովների 46 նիստ է տեղի ունեցել: Զբաղմունքների նիւթերն եղել են մեծ մասամբ վարչական, դաստիարակչական խնդիրներ, որոնց մէջ գլխաւորը տեղը բռնել է նոյն առարկաների դասատուների պարապմունքների մէջ ընդհանուր ներդաշնակութիւն պահպանելու ծրագիրը, աշակերտների դաստիարակութեան բարելաւումը և նրանց մէջ աշխատանքի եռանդը և պատրաստակամութիւնը զօրացնելու հարցեր: Ուսուցչական ժողովին մասնաւորապէս զբաղեցրել է Ներսիսեան դպրոցի ծրագրի մշակումը, որ սկսւած է անցեալ տարւանից:

Դպրոցի բարոյական մթնոլորտը որակելով կարելի էր այս տարին աշխատանքի և կարգի տարի համարել: Դպրոցական կեանքին անախորժ և խորթ ոչ մի երևոյթ չի խանգարել պարապմունքների կանոնաւոր ընթացքը: Դրսում ստեղծւած համեմատական խաղաղութիւնը նաև աշակերտների մտածողութեան մէջ յօգուտ աշխատանքի և պարտաճանաչութեան առաջ եկած խիստ հասկանալի, խիստ բնական յեղաշրջումը եկել են լայն չափով օժանդակելու դպրոցական կեանքի նորմալ և արդիւնաւէտ ընթացքին: Հաճոյքով արձանագրում է վերատեսուչը նաև ուսուցչական խմբի մէջ իշխող կատարեալ համերաշխութիւնը, որ այնպէս փայլուն կերպով արտայայտւում էր մանկավարժական ժողովներում: Վերատեսուչը առանձին արժէք է տալիս այս երևոյթին, որովհետև ուսուցչական խմբի ներդաշնակ գործունէութիւնը, համերաշխութիւնը ունենում է իր չափազանց բարերար ազդեցութիւնը աշակերտների վրայ և դրա հակառակ ամենաթեթև ընդհարումը կամ յարաբերութիւնների անախորժութիւնը ուսուցիչների մէջ միշտ ունենում է չա-

փազանց կորստաբեր, չափազանց արտասւալի հետևանքներ կրթող սերնդի վրայ։

Գիտակցելով որ աշակերտական անօգուտ տրտունջներն ու յուզումները յաճախ արդիւնք են նրանց տւած աշխատանքի ոչ բաւարար չափի կամ լրջութեան պակասութեան, մանկավարժական ժողովը հետամուտ եղաւ դասերից դուրս կազմակերպել գրական հանդէսներ թէ հայերէն և թէ ռուսերէն լեզուներով։ Տարաբաղդաբար յարմարաւոր դահլիճի բացակայութիւնը միշտ խոչընդոտ է հանդիսանում և՛ բազմակողմանիութեան և՛ յաճախ կազմակերպելուն։ Դա խիստ ցաւալի հանգամանք է, որովհետև այդ աշակերտական հանդէսների դաստիարակչական ահագին նշանակութիւնն անվիճելի է։ Մասնաւորապէս բարձր VI և VII դասարանները անտեղի ժամավաճառութիւնից ազատելու, նրանց ազատ ժամանակը օգտակար կերպով գործ դնելու նպատակով վերատեսուչը յանձն առաւ յունվարից յետոյ ընդհանուր գրականական դասեր (2-3 շաբաթական յիշեալ դասարաններում ճաշերից յետոյ)։ Ուրախալի էր, որ այդ ազատ դասընթացքը գրաւում, էր այդ երկու դասարանների համարեա ամբողջութիւնը։

Վերատեսուչը Հոգաբարձութեան ուշադրութիւնը հրաւիրում է աշակերտական նպաստների սիստեմի վրայ։ Նպաստների գործը մինչև այժմ եղած սովորական ձևով շարունակելը համարեա անհնարին է։ Աշակերտներին հընգական ռուբլի է բաժանւում, միացնելով դրա հետ նաև ոմանց ձրի ճաշ։ Այդ օգնութիւնը միանգամայն անբաւար է, ոչ թէ տանելի, այլ նոյն իսկ տանելիից էլ վար կեցութիւն վարելու համար։ Այդ պատճառով նպաստն իր նպատակին չի հասնում, չի օժանդակում աշակերտների սովորելուն և ընդհակառակը շատերը քայքայւած առողջութեամբ թողնում հեռանում են ուսման կէսից յաճախ առողջութիւնն անդառնալի կերպով կորցրած։ Այս բոլորը



չափազանց ցաւալի է։ և անդրադառնում է աշակերտների ֆիզիկականից դուրս նաև բարոյականի վրայ։ Նրանց դաստիարակութիւնը չափազանց տուժում է այդ յարատև ու անողորմ պայքարից, կեանքի անանցանելի դժուարութիւնների դէմ, պայքար, ուր յաղթանակը միշտ կարիքինն է։ Մենք մեր նպաստների սիստեմով գրաւել ենք կարօտ աշակերտների ահագին թիւ, հետևապէս և գիտակցաբար պատրաստել ենք տառապողների մի ահագին բազմութիւն։ Անհրաժեշտ է հիմնովին վերափոխել նպաստի գործը հետևեալ կերպով. ա) Նւազեցնելով նպաստաւորների թիւը, բարձացնել նպաստի քանակը, օրինակ փոխանակ հինգ ռուբլու յատկացնել տասը ռուբլի։ Բ) Երբէք դրամը չտալ աշակերտների ձեռքը, որոնք հեշտութեամբ կարող են այն ծախսել իրենց ոչ առաջնակարգ պէտքերի վրայ։ Գ) Նպաստի մի մասը իրագործել զգեստ տալով չունևոր երեխաներին։ Դ) Վարձել նրանց համար յարմարաւոր բնակարաններ, 2-3-4 հոգու միասին։

Անկասկած՝ վարչութիւնը այս բոլոր դժւարութեամբ կը կարողանայ մենակ իրագործել, ուստի անհրաժեշտ է գործի կոչել «Ներսիսեան դպրոցի չքաւոր աշակերտներին օգնող ընկերութիւնը», որ եթէ վերջնականապէս կազմակերպւի, կարող է վերին աստիճանի օգտակար լինել։

## Ե.

### Սօլօլակի բաժանմունքի 1907—1908 թ. ուսում. տարւայ տեղեկագիրը.

Այս տարի Սօլօլակի բաժանմունքում զետեղւած էին չորս պատրաստական և մի առաջին դասարան, որոնցից Գ. հ. դասարանը ծառայեց իբրև վարժոց ուսուցչացու-

ների (VII. դասարանի աշակերտների) գործնական պարապմունքների համար:

Աշակերտների ընդհանուր թիւը տարւայ սկզբին եղել է 234, իսկ վերջը 228, որոնց 119 մայր—դպրոցից փոխադրւածներն են: Երկու աշակերտ մեռան քութէշից, իսկ միւսները դուրս գնացին դպրոցից զանազան պատճառներով:

Դասարանների վերջնական կազմը հետևեալն էր.

Բ. հ. և Բ. գ. պատրաստական դասարաններ 82 հոգի
Գ. հ. և Գ. գ. » » 101 »
I. դասարան » » 45 »

Այս աշակերտներից Թիֆլիսեցի են 92, գաւառացի 123, Տաճկաստանից 9 և Պարսկաստանից 4:

Ծնողների կոչումը.

| | | |
|---|---|---|
| Առևտրականների որդիք | . | 82 հոգի |
| Արհեստաւորների | . | 77 » |
| Բանւորների որդիք | . | 34 » |
| Երկրագործների | . | 7 » |
| Ծառայողների | . | 8 » |
| Գրականագէտների | . | 2 » |
| Դերասանների | . | 2 » |
| Ուսուցիչների | . | 4 » |
| Հոգևորականների | . | 5 » |

Աշակերտների յառաջադիմութիւնը.

| Դասարաններ | Աշակերտների թիւը | Փոխադրւում են | Մնում են |
|---|---|---|---|
| Բ. և Բ. գ. պ. | 82 | 67 հոգի | 15 հոգի |
| Գ. և Գ. գ. » | 101 | 81 » | 20 » |
| I. դասարան | 45 | 28 » | 17 » |



Այսպիսով 228 աշակերտներից փոխադրւում են 176 հոգի, մնում են 52 հոգի, այսինքն 77,2 $^{0}/_{0}$: Մնացողներից 11 հոգի արձակւել են իբրև երկրորդ տարին մնացողներ:

Աշակերտների բացակայութիւնները

Այս տարի աշակերտների բացակայութիւններն անհատական բնաւորութիւն են ունեցել և պարապմունքներին զգալի խանգարմունք չեն պատճառել, թէև օր. քութէշից եղան հիւանդացողներ և երկու մեռնող:

Սօլօլակի բաժանմունքը այս տարի էլ թօշակաւորներ չէ ունեցել և չքաւորներին բաժանել է գրքեր և այլ դասական պիտոյքներ:

Ազատ ընթերցանութիւն

Շաբաթական ընթերցանութեան ժամերն այս տարի աւելի զարգացրին ընթերցասիրութիւն աշակերտների մէջ: Քանի որ Սօլօլակի բաժանմունքը սեպհական աշակերտական մատենադարան չունէր, աշակերտներին դիւրութիւն տւեց Սօլօլակի էժանագին գրադարանից գրքեր ստանալու:

## Ուսուցիչներ

| Ուսուցիչների Ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է պաշտօնավարում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Բաբասեան Յարութիւն | Գէորգեան ճեմ. | 1906 | Հայոց լեզու և երգեցողութիւն |
| Դիլանեան Խաչատուր | Ներսիս. դպրոց և կաթնատնտեսութեան դպրոց | 1906 | Թւաբանութիւն բնական գիտութիւններ, երկրաչափութիւն |
| Զառաֆեան Աւետիք | Ներսիս. դ. | 1906 | Աշխարհագրութիւն, պատմութիւն, գեղագրութիւն |
| Խուցեան Սարգիս սարկաւագ | Գէորգեան ճեմարան | 1901 | Կրօնագիտութ. |
| Մառանջեան Սեդրակ | Ներսիս. դպրոց և կոչում քաղաք. դպր. ուսուցչի | 1906 | Հայոց լեզու, իրագնութիւն |
| Շահմազեան Արսէն | Ներս. դպրոց և Թիֆլ. նկարչ. կուրսեր | 1906 | Նկարչութիւն |



| Ուսուցիչների Ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է պաշտօնավարում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Պապովեան Գրիգոր | Ներս. դ. և ռուս. համալս. | 1907 | Ռուսաց լեզու |
| Տէր Միրաքեան Յովհ. | Թիֆլ. ռէալ. դպրոց և Ենայի համալս. | 1906 | Հայոց լեզու, բնական գիտութիւններ, թւաբանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն վարժուցում: |

Ամբողջ տարւայ ընթացքում պարապմունք եղել է 168 օր.

### Ուսուցիչների բացակայութիւնները

Մառանջեանը բացակայել է 1 դասից, հ. Բարխմեանը"
2, Բաբասեանը՝ 8, Շահմազեանը՝ 14, Զառաֆեանը՝ 17,
հ.՝ Խուցեանը՝ 25, Պապրովեանը՝ 55 դասից։ Այս 124
բացակայութիւններից 88 յարգելի պատճառներով են եղել,
իսկ 36-ի համար այդպիսի տեղեկութիւններ տրւած չեն։

### Մանկավարժական ժողովները.

Այս տարւայ ընթացքում Սօլօլակի բաժանմունքում
տեղի են ունեցել 18 անգամ մանկավարժական ժողովներ։
Պարապմունքների նիւթ եղել են բացի վարչական
խնդիրներից դասագրքերն ու դասական պլանները։

Առանձին ուշադրութեան առնուած են գրաւոր աշխատութիւնների մեթոդները: Բանաւոր պարապմունքների մասին ժողովներում միայն մի քանի խոշոր խնդիրների մասին խօսք է եղել: Մեթոդների մասին առաւելն աւելի յարմար է համարել այս կամ այն դասին վերաբերեալ խորհրդակցութիւններ ունենալ ամեն մի ուսուցչի հետ առանձին առանձին:

### Ուսուցչացուների պարապմունքները վարժոցում

Այս տարի ուսուցչացուների գործնական պարապմունքները տեղի ունեցան Սօլօլակի բաժանմունքի Գ. հիմնական պատրաստական դասարանում: Պրակտիկանտները 12 հոգի էին: Սկզբները, այսինքն մինչև նոյեմբերի 3-ը, քանի որ մանկավարժութեան թէօրիայից ուսուցչացուները պատրաստութիւն չունէին, նպատակայարմար համարուեց պրակտիկային յատկացրուած շաբաթական 7 ժամից միայն 3 ժամը յատկացնել վարիչի դասաւանդութեանը վարժոցում ներկայ լինելու: Այնուհետև որ առարկայի մեթոդիկան որ վերջացնում էին, հետզհետէ անցնում էին նաև այդ առարկայի դասաւանդմանը երեք շաբաթական հերթով: Միայն հայոց լեզուին՝ իբրև մեթոդական տեսակէտից աւելի բարդ առարկայի՝ 4—5 շաբաթական հերթ տրուեց: Այնպիսով բոլոր պրակտիկանտներին դասաւանդման հերթ հասաւ մի մի փորձնական դասով:

Վարժոցում տեղի ունեցան 147 ժամ գործնական պարապմունքներ հայոց լեզուից, թւաբանութիւնից, բնական գիտութիւններից (հանքաբանութիւնից, բուսաբանութիւնից, կենդանաբանութիւնից և բնագիտութիւնից), պատմութիւնից և աշխարագրութիւնից:

Պրակտիկանտներից հայոց լեզու աւանդել են Ազատեանն ու Իգիթխանեանը, թւաբանութիւն՝ Ռեւազեանն ու Աւետիքեանը, պատմութիւն՝ Մելիքեանն ու Յովհաննիսեանը, աշխարհագրութիւն՝ Ստեփանեանը, Թարագեանը, Տէր Մաթէոսեանն ու Գումշայեանը, բնական գիտութիւններ՝ Ղազարեանն ու Զաքարեանը:



Այս տարուայ VII դասարանի մանկավարժական պարապմունքների մասին վարիչի եզրակացութիւնը հետեւալն է. ուսուցչացուները տարրական դպրոցների ծրագրի առարկաների մեթոդիկան գոհացուցիչ չափով իւրացրին և թէ իբրև պրակտիկանտներ և թէ իբրև քննադատ՝ ապացուցին, որ ճանաչեցին այն ճանապարհը, որ նրանց պիտի տանի դէպի կատարելագործութիւն և արգասաւոր գործունէութիւն:

## Զ.

## ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ 1907-1908 ՈՒՍՈՒՄ. ՏԱՐՒԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Հաւլաբարի բաժանմունքում կային 170 աշակերտ, որոնց վրայ աւելացան մայր-դպրոցի այս բաժանմունքը փոխադրուած 142 աշակերտները և սեպտեմբերի կիսին վերաբացուած ա. պատրաստականի աշակերտներից 17-ը ու նոր ընդունուած 9 հոգի: Այսպիսով աշակերտների ընդհարուր թիւը 338 եղաւ: Տարուայ ընթացքում հեռացան 25 հոգի, այսպիսով տարուայ վերջը դպրոցում մնացին ընդամենը 313 աշակերտ:

Հաւլաբարի բաժանմունքում այս աշակերտները գետեղուած էին այսպէս.

| | |
|---|---|
| Ա. պատրաստական դասարանում | 32 հոգի |
| Բ. հիմ. » » | 47 » |
| Բ. զ. » » | 46 » |
| Գ. հ. » » | 47 » |
| Գ. զ. » » | 49 » |
| I. հ. դասարանում » | 47 » |
| I. զ. » » | 45 » |
| Գումար | 313 հոգի |

| | | |
|---|---|---|
| Թիֆլիս քաղաքը ունել է | 173 | աշակերտ |
| Թիֆլիսի նահանգը (առանց քաղ. | 67 | » |
| Քութայիսի նահանգը | 1 | » |
| Բագւի » | 6 | » |
| Գանձակի » | 12 | » |
| Երևանի » | 30 | » |
| Կարսի շրջանը | 6 | » |
| Զաքաթալայի | 1 | » |
| Հիւսիսային Կովկասը | 1 | » |
| Պարսկաստանը | 2 | » |
| Տաճկաստանը | 14 | » |
| | 313 | |

Աշակերտների մի խոշոր տոկոսը 249-ը (79,6%) Վրաստանի և Իմերէթի թեմից են։

Ըստ ծնողների կոչման աշակերտները բաժանւում են այսպէս.

| | |
|---|---|
| Արհեստաւոր | 88 (28, 1%) |
| Առևտրական | 94 (30, 0%) |
| Հոգևորական | 19 ( 6, 1%) |
| Բանւոր | 52 (16, 6%) |
| Ծառայող | 23 ( 7, 4%) |
| Երկրագործ | 37 (11, 8%) |



Աշակերտների յառաջադիմութիւնը

| Դասարաններ | Աշակերտների թիվ | Փոխադրւում են | Մնում են |
|---|---|---|---|
| Ա. պատրաստ. դ. | 32 | 24 | 8 |
| Բ. հ. Բ. դ. | 93 | 70 | 23 |
| Գ. հ. Գ. դ. | 96 | 61 | 35 |
| Դ. հ. Դ, դ. դասար. | 92 | 50 | 42 |
| | 313 | 205 | 108 |

Չփոխադրուած աշակերտներից 24 հոգի արձակուած են երկրորդ տարի մնալու պատճառով, իսկ 12 հոգի չեն ներկայացել վերաքննութեան։

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է պաշտօնավարում Նախիջևանում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Արապեան Յովսէփ | Ներսիսեան դպրոց | 1906 | Հայոց լեզու, երգեցողութիւն |
| Աւետեան Սեդրակ | Խարկովի համալսարան | 1906 | Ռուսաց լեզու |
| Թումանեան Աշոտ | Ներսիսեան դպրոց | 1906 | Հայոց լեզու և պատմութիւն |
| Թոփչեան Հրանոյշ | Ալեքսանդրապոլի պրոգիմնազիա, (ունի ուսուց. ցենզ) | 1906 | Հայոց լեզու, թուաբանութիւն, իրազննութիւն |
| Ղազարեան Գէորգ | Բեռլինում Հումբ. կուրս. (ունի ուսուց.) ցենզ) | 1907 | Թուաբանութիւն |
| Նահապետեան Յարութիւն | Ներսիսեան դպրոց | 1907 | Թուաբանութիւն, կրօն, երկչափութիւն |
| Նիկողոսեան Աբգար | Գէորգ. ճեմ. VI դաս. | 1907 | Հայոց լեզու, կրօնագիտութիւն |



| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում է աւարտել | Ո՞ր թուականից է պաշտօնավարում Նախիջևանում | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Շահմազեան Արսէն | Ներս. դպրոց Թիֆլ. | 1906 | Նկարչութիւն |
| Ջալալեան օր. Մարիամ | օր. Գիմնազիա | 1907 | Ռուսաց լեզու, թուաբանութիւն, իրազըննութիւն |
| Սահակեան Արամ | Ներսիսեան դպրոց | 1906 | Բնական գիտութիւններ, աշխարհագրութիւն |
| Սամուէլեան օր. Սօֆիա | Օր. գիմնազիա | 1907 | Հայոց լեզու, թուաբանութիւն, իրազըննութիւն, երգեցողութիւն |
| Քարիմեան Համբարձում սարկաւագ | Ներսիսեան դպրոց | 1896 | Կրօնագիտութիւն |

Տարւայ ընթացքում ուսուցչական պաշտօն են վարել բաժանմունքում նաև պ. պ. Թադէոսեան Արշակ, Ղորղանեան Լևոն և Ալթունեան Գէորգ, որոնք դպրոցական էթիկային ոչ լիովին համապատասխան պատճառներով թողին դասերն ու հեռացան։

Այնուհետև հրաւիրւեց ուսուցիչ պ. Սըգար Նիկողոսեանը, որը մինչև տարւայ վերջը աւանդեց գ. պատրաստականներում հայոց լեզուի և կրօնի դասերը։ Ուսուցիչների այս վերաբերմունքը ուրիշ մի քանի անբարեյաջող հանգամանքների հետ միասին պատճառ եղան գ. պատրաստականների թոյլ յառաջադիմութեան, այն ինչ բ. պատրաստականների 93 աշակերտից փոխադրւում են 61 հոգի ($65,6^{0}/_{0}$), գ. պատրաստականների 96 աշակերտից փոխադրւում են միայն 38 հոգի ($39,6^{0}/_{0}$)։ Մնացած ուսուցիչները մինչև տարւայ վերջը բարեխղճաբար կատարել են իրենց ստանձնած պարտականութիւնը։

Ուսուցիչների բացակայութիւնները. պ. Սահակեան բացակայել է 8 օր, պ. Նահապետեան 15 օր, պ. Շահմազեան 3 օր, Սամուէլեան 12 օր, պ. Թումանեան 1 օր՝ բոլորն էլ յարգելի պատճառներով։ Բացի այդ տ. Թովչեանը հիւանդութեան պատճառով բացակայել է մի ամիս։ Տիկնոջ դասերը պարապել են այդ ամսւայ ընթացքում նրա ընկերները։

Մանկավարժական ժողովների նիւթ եղել են. 1. վերաքննութիւնների հետևանքները, 2. ծրագրների քննութիւնը, 3. դպրոցական կարգապահութեան վերաբերեալ խնդիրներ, 4. դասագրքերի ընտրութիւն, 5. աշակերտների յառաջադիմութեան արդիւնքը, 6. չքաւոր աշակերտներին նպաստներ բաժանելու խնդիրը։

---

## Բժշկական Տեղեկագիր Ներսիսեան Հոգևոր Դպրանոցի և Նրա բաժանմունքների 1907—1908 ուսումնական տարւայ։

ա. Մայր դպրոցի սաների առողջական դրութիւնը բաւարար էր։ Մի աշակերտ միայն ունէր սրտի արատ, բայց ոչ անչափ վտանգաւոր որ պահանջ լինէր հեռացնել դպրոցից։ Ժամանակաւոր կերպով արգելւեց մի ուրիշին յաճախել դպրոցը, որովհետև էպիլէպսիայի նշաններ ունէր և մի երրորդը տարւայ վերջին հեռացաւ կրծքի թուլութիւնից կազդուրուելու։

բ. Հաւլաբարի բաժանմունքի մէջ մի աշակերտ հեռացրած է նոյնպէս ժամանակաւորապէս ուսումնարանից թոքախտի պատճառով. այդ երեխան սակայն մի քանի ամիս բժշկւելուց յետոյ բաւականաչափ կազդուրւեց և նորից թոյլտւութիւն ստացաւ յաճախելու դասերը։ Մի ուրիշ երեխայ հեռացւեց ուսումնարանից ոսկրային հիւանդութեան պատճառով (туберкулезъ костей), որ բժշկուէր տանը, որը մի քանի ամսից յետոյ կարող եղաւ նորից յաճախել դասերը։

գ. Ընդհանուր քննումը ցոյց տւեց, որ աշակերտների մէջ մի խոշոր տոկոս, այն է մօտ $10^{0}/_{0}$, կարիք ունէն մշտական բժշկական հսկողութեան, գլխաւորապէս բաժանմունքների մէջ։ Նրանց յայտնւած էր որ շաբաթը գոնէ մի անգամ ներկայանան բժշկին։

## Բժշկական օգնութիւն։

Բժշկական խնամատարութիւնը սահմանուած է եղել ըստ հրահանգի, այն է.

1. Շաբաթը երեք անգամ բժշկի այցելում մայր դպր.
   « երկու « Հաւլաբարի բաժանմունքը
   « երկու « Սոլոլակի բաժան.

Այդ օրերը որոշ ժամերին ընդունւում էին հիւանդ աշակերտներ և դեղեր ստանում։ Բոլոր երեք դպրոցներում կային փոքրիկ դեղարաններ, որտեղից հասարակ դեղեր էին բաժանում, իսկ բարդ դեղերի համար տրւում են դեղատոմսեր։

2. Բժիշկը ամեն օր ընդունում էր նաև իր բնակարանում հիւանդ աշակերտներ բոլոր երեք դպրոցներից։

3. Պարկած հիւանդներին այցելում է իրանց բնակարանում։ Այցելութիւնները տևել են հոկտ. 1-ից մինչև Ապրիլի 29-ը, այնուհետև մինչև Մայիսի 17-ը այցելել է բժ. Ն. Խատիսեանը որ և ներկայացրել է իր ժամանակամիջոցի վիճակագրութիւնը։

Հիւանդութիւնների մեծագոյն մասը ջերմային հիւ. (մալարիա, ինֆլուէնցա), որոնց դէմ տրւում էր դպրոցական դեղարանից խինա և նման դեղեր։

---



## Դպրոցների հիւանդական դրութիւնը։

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԻՒԸ։

| Մայր դպրոց | Հաւլաբարի բաժ. | Սոլոլակի բաժ. |
|---|---|---|
| Մալարիա և ինֆլուէնցա —165 | 244 | 127 |
| Ստամոքս-աղիքային խանգարումներ —186 | 142 | 79 |
| Շնչառութեան գործար. հիւ. —194 | 152 | 80 |
| Արեան պակասութիւն —14 | 37 | 30 |
| Խուլախտ (залотуха) — 3 | 12 | 3 |
| Բգացուեր —26 | 93 | 15 |
| Ներվային ցաւեր — 9 | 14 | 8 |
| Փորի ճիճուներ —11 | 14 | 7 |
| Վէրքեր —31 | 16 | 16 |
| Մաշկի հիւանդ. —36 | 26 | 8 |
| Աչքի հիւանդութ. —42 | 48 | 36 |
| Քամի (ревматизмъ) —16 | 17 | 8 |
| Ականջի հիւանդ. — 8 | 34 | 21 |
| Ատամնացաւեր —37 | 27 | 20 |
| Ընկնաւորութ. (epilepsis) — 1 | — | — |
| Սրտի արատ — 1 | — | — |
| Թոքախտ — 1 | 1 | — |
| Քթի հիւանդութ. — | 12 | 8 |
| Ծաղիկ և քութէշ —12 | 8 | 5 |
| 801 | 837 | 471 |

Այս թւերը ցոյց են տալիս այցելութիւնների քանակը, որ է 2109.

Այս թւի մէջ մտնում են նաև բժշկի այցելութիւնները տներում։

Բժ. Վ. Արծրունի

Բժ. Ն. Խատիսեանց.

Բժ. Յ. Իգիթեանց.

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի վերաստուգող Յանձնաժողովի զեկուցում

Ներսիսեան Հայոց Հոգեւոր դպրոցի վերաստուգիչ յանձնաժողովը իւր նիստում քննելով Ներսիսեան Հոգեւոր դպրոցի ել և մտից հաշիւները և ստուգելով նախկին յօդուածները վաւերական փաստաթղթերով գտաւ այդ հաշիւները ճիշտ և կանոնաւոր տարուած։ Հաշիւները պահուել են յունվարից յունվար, իսկ ներկայ հոգաբարձութիւնը բարւոք է համարել հաշիւները պահել մի ուսումնական տարուայ սկզբից մինչև միւս ուսումնական տարուայ սկիզբը, որն աւելի յարմար է մի դպրոցի համար։ Հոգաբարձութիւնը իւր գործունէութիւնն սկսել է 1906 թւի յուլիսի կէսից և այդ ժամանակից մինչև 1908 թւի սեպտ. 1-ը մուտք ունեցել է կալուածներից, մոմավաճառութիւնից, տոկոսներից և ապառիկներից ընդամենը 398.572 ր. 67 կ. Նոյն ժամանակամիջոցում ծախք ունեցել է—ուսուցիչների ռոճիկներ, կենսաթոշակներ, շինութիւնների, դիւանատան վրայ, ծառաներին ռոճիկ տոկոսներ, քաղաքային հարկեր և այլն 404.114 ր. 96 կ.։ Հին հոգաբարձութիւնից կանխիկ դրամ ստացել է 6.472 ր. 28 կ. մնում է մնացորդ առ 1-ն սեպտ. 1908 թիւ կանխիկ դրամով 929 ր. 99 կ.։ Ծախքը ծածկելու համար հոգաբարձութիւնն ստիպուած է եղել դպրոցի պահեստի ուած գումարը 114.345 ր. 53 կ. ժամանակամիջոցը լրանալու պատճառով յետ ստանալ. բացի դրանից գրաւ է դրել տեղական բանկերում զանազան տոկոսաբեր տոմսեր, որի



պարտքը ներկայումս առ 4-ն սեպտ. 1908 թ. մնում է 55.127 ր. 94 կ.

Առաջին թերութիւնը, որ կարելի է նկատել Ներսիսեան Հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան գործունէութեան մէջ՝ այդ այն է, որ գործը սկսելիս հոգաբարձութիւնը լաւ ծանօթ չլինելով գործի ամբողջութեան հետ չի կարողացել ստեղծել մի ամբողջական ծրագիր ապագայ գործունէութեան, չի ունեցել նախապէս պատրաստած մի նախահաշիւ, իսկ յետագայում կազմած նախահաշիւը չի նախատեսել բոլոր հնարաւոր պատահականութիւնները, որոնք կարող են գալ խանգարելու գործի ընթացքը։

Իւր նախահաշիւը կազմելիս հոգաբարձութիւնը համարել է իբրև անպայման ստացուելիք ղազախեցիների պարտք 35 հազար րուբլին և կառավարութեան մօտ մնացած 48 հազար րուբլին, այն ինչ իրականութիւնը ցոյց տուեց, որ առաջիններից ստացուել է միայ մօտ 9952 ր. 10 կ., իսկ երկրորդից 26.210 ր.

Այդ երկու ծանրակշիռ հանգամանքները արդէն խախտել են նախահաշուի հաւասարակշռութիւնը։ Նախահաշուի այդ հաւասարակշիռն իրագործելուն մեծապէս եկել է վնասելու և այն նոր օրէնքը, որի հիման վրայ հասարակական հիմնարկութիւնների գործերը անցնելու են շրջանային դատաստանից (Окруж. Суд-ից) և ոչ քննութեան պարզացրած եղանակով (упрощенн. способомъ разсмотр.) ինչպէս վերջին տարիներն են եղել, այլ սովորական կարգով (обычнымъ порядкомъ), այսինքն տարիներով յետաձգվում է դպրոցի պարտքերի գանձումը դատաստանական ճանապարհով, այն ինչ այդպէս սպասելիք գանձումների քանակը հասնում է մի խոշոր գումարի—մօտ 20.000 ր., որ նոյն օրէնքի պատճառով մինչև հիմայ էլ մնում է ապառիկ, մինչդեռ հին օրէնքով մի քանի ամսում վերջացած կլինէր։

Այսպէս ուրեմն սկզբից և եթ գործունէութիւնը դր-

ված չի եղել նորմալ պայմանների մէջ և կազմել է խո-
շոր դեֆիցիտ 60.242 ր. 84 կ. քսան և վեց ամսւայ
ընթացքում, որ աւելանալով անցեալ տարիների պարտ-
քերի վրայ հասել է մինչև 98,440 ր. 83 կ, որից դրա-
ւականներ են 9612 ր. 40 կ.։—Աննորմալ է այդ երևոյթը,
որ դեֆիցիտը նախ շատ խոշոր է, երկրորդ՝ տարեց տա-
րի չի նւազում զգալապէս և երրորդ՝ այդ դեֆի-
ցիտը հետևանք է ոչ թէ պատահական խոշոր ծախսերի
(օրինակ շինութեան նորոգում կամ նոր կառուցում) այլ
ընթացիկ մուտքի և ելքի մէջ եղած մեծ տարբերու-
թեանը, բիւջէի անհաւասարակշռութեանը։—

Իհարկէ, այնպիսի խոշոր հիմնարկութիւններ, ինչպէս
քաղաքային ինքնավարութիւնները և մեծ հասարակական
նշանակութիւն և բնոյթ ունեցող հիմնարկութիւնները,
որոնց գործունէութիւնը չի սահմանափակվում մէկ սե-
րնդի ժամանակամիջոցով, այլ անցնում է մի շարք
սերունդների վրայով՝ չեն կարող առանց պարտքի բա-
ւարար կերպով տանել գործը, ունելով ժամանակի պա-
հանջին համեմատ բարեփոխութիւններ գործավարու-
թեան մէջ՝ ոչ միայն ներկայ սերնդի, այլ և ապագայ
սերունդների համար։—

Պարզ է որ ապագայ սերունդների վերայ այժմեանից
կարելի է գնել իրենց պարտականութիւնների մի մասը՝
պարտքերի եղանակով։ Սակայն և այնպէս յանձնաժողովս
գտնում է, որ 100.000 ր. պարտքը շատ մեծ է. և ինչ
որ գլխաւորն է այդ պարտքը հանգցնելու համար չեն
ձեռնարկւում անհրաժեշտ միջոցներ, այսինքն նախահաշւի
մէջ չեն մտցնում $^{00}/_{00}$, որչափով պարտքերը պարբերա-
բար պիտի հանգցւեն։

Չի կարելի նախատեսնել, որ դպրոցը երբևիցէ հնարաւո
րութիւն ունենայ վճարել այդ խոշոր պարտքը, ուստի
հարկաւոր է այժմեանից տարէցտարի $^{00}/_{00}$ հանգցնել,



ինչպէս վարւում են հասարակական այլ հիմնարկութիւն-
ներ նման դէպքերում։

Անհրաժեշտ համարելով հանդերձ այնպիսի ծախսերը,
որոնք առաջին գալիս ուսուցչական կազմը լաւացնելու
և յարմարեցնելու, այլև ծրագիրը ընդարձակելու, լայնաց-
նելու և ներկայ գիտութեան պահանջներին համապատաս-
խանեցնելու համար, այնուամենայնիւ յանձնաժողովս այդ-
պիսի ծախսերի շարքում չի կարող դնել այն էքսպէրի-
մենտները, որ կատարել է Հոգաբարձութիւնը՝ համաձայնե-
լով մանկավարժական ժողովների առաջարկներին, մերթ
բանալով, մերթ փակելով 7-րդ դասարան, վարժոց, բա-
ժանմունքներ և այլն։ Կարելի էր պահանջել աւելի մտած-
ւած և նախագծւած գործունէութիւն այդ ասպարէզում,
որպէսզի սխալւած չլինէր մի տարւայ արածը միւս տա-
րի (քանդել) փոխել։

Մի այլ հարց, որ առաջ է գալիս հոգաբարձութեան
գործունէութիւնը քննելիս՝ դա դպրոցական տոկոսաբեր
թղթերի ծախելն է։ Եթէ մինչև անգամ իրաւաբանական
տեսակէտից դա անթոյլատրելի լինէր, յամենայն դէպս
չի կարելի իրաւացի չհամարել Հոգաբարձութեան առար-
կութիւնը՝ թէ այդ գումարները դարձեալ մնում են ան-
ձեռնմխելի, բայց ոչ տոկոսաբեր թղթերի մէջ, որոնք
բերում են $5^{0}/_{0}$, այլ շինութիւնների մէջ, որոնք բերում
են 10—$15^{0}/_{0}$ առաւել ևս Նադիրեանի հողերի մէջ, որ
անշուշտ իր գնի (10.000 ր.) փոխարէնը կբերէ տասնա-
պատիկը, եթէ ոչ աւելին։ Նկատողութեան հարկաւոր է
առնել և այն տխուր հանգամանքը, որ հոգաբարձութիւնը
տւել է մօտ 8000 ր. 32 ամսւայ ընթացքում իբրև $^{0}/_{0}$
այն 35 հազարի համար, որ նախկին Հոգաբարձութիւնը,
չը գիտենք ում թոյլտւութեամբ տւել է ղազախեցիներին
իբրև անտոկոս փոխառութիւն։

Իբրև մանր նկատողութիւններ չը պէտքէ աչքաթող անել հետևեալ կէտերը.

1) Զանազան պարտքեր անուան տակ մտցրած է շատ խոշոր գումար՝ 7000 ռ. հարկաւոր էր աւելի մանրամասն նշանակել այդ պարտքերի բնոյթը։

2) Խմբապետին հասնելիք 300 ռ. հարկաւոր էր մըտցնել իբրև դասագին՝ խմբական երգեցողութեան դասերի շարքում, և ոչ խմբապետութեան համար, որովհետև իբրապէս խմբապետութիւն չըկայ ներկայումս դպրոցում։

3) Մոմավաճառութիւնը կապալով տրւած է և նրա կըպակի վարձը ամբողջովին պիտի վճարէ կապալառուն։

Բացի վերոյիշեալ կէտերից վերստուգող յանձնաժողովը անհրաժեշտ է համարում ուշադրութեան առնել Հոգաբարձութեան գործունէութեան դրական հետևանքները. հաշւապահութիւնը կատարւել է կանոնաւոր ըստ հաշւապահական կանոնների։ Երկու տարւայ ընթացքում կառուցել են մի քանի շահաւէտ շինութիւններ. Օրինակ՝ 1) կառուցել են նոր քսան կրպակ ծախսելով նըրանց վերայ 42.000 ռ., որը եկամուտ է բերում 6180 ռ.

2) Հին դպրոցատունը, քանդւած և այրւած դեկտեմբերեան ամբակոծութիւններից յետոյ՝ նորոգել է, ծախսելով 23.000 ռ. բերում է տարեկան եկամուտ 13.500 ռ.

3) Դպրոցապատկան դատարկ հողը, որ երկար տարիների ընթացքում մնացել էր անարդիւնք, վերածւել է շուկայի փայտաշէն կրպակներով, որի վրայ ծախսւել է 6776 ռ., իսկ եկամուտ բերում է 2200 ռ. և ապագայում խոստանում է դառնալ շատ մեծ եկամուտի աղբիւր, որովհետև դրա մօտ եղած Մուխրանսկու շուկան շատ լցւել է։

4) Այժմեան դպրոցի ներքնայարկում շինւել են մի շարք կրպակներ, որ բերում են այժմ 2000 ռ. այն ինչ առաջ ոչ մի եկամուտ չէին բերում։

Բացի շինութիւններից հոգաբարձութիւնը գնել է



10.000 ռուբլու տիկին Նադիրեանից իրապէս $21^{1}/_{2}$ դեսեատին հող, որի արժողութիւնը ներկայումս, առաւել ևս ապագայում կըկազմի տւած գնից մի քանի անգամ աւելին։

Առանձին ուշադրութեան արժանի է դպրոցի նոր շինութեան համար հոգաբարձութեան կատարած քայլերը և ունեցած յաջողութիւնը՝ նւէր ստանալով տ. Նադիրեանից 4 դեսեատին հող հոգաբարձութիւնը նւէր ստացաւ նաև պ. Ա. Մանթաշեանից դրական խոստում՝ կառուցանել թէ դպրոցի շէնքը և թէ դէպի այդ շէնքը տանող ճանապարհը, որի համար պ. Մաթաշեանը յատկացրել է առայժմ 200.000 ռուբլի։

Չքաւոր աշակերտների դրութիւնը բարելաւելու և նրանց օգնութիւն հասցնելու հարցը կանոնաւոր հողի վրայ դնելու համար ներկայ հոգաբարձութեան օրով կազմւել է մի յատուկ ընկերութիւն, բացի դրանից հոգաբարձութիւնը յօգուտ այդ աշակերտների անցեալ տարի ունեցել է 1500 ռ. եկամուտ մի երեկոյթից։

Այս բոլորից չի կարելի չընկատել և այն, որ նոյն հոգաբարձութեան օրով, նրա և մանկավարժական ժողովի ջանքերով կազմւած է և կեանքի մէջ մտցրած դպրոցի նոր և կանոնաւոր ծրագիրը, որ պէտքէ համարել մի խոշոր առաջադիմութիւն մեր դպրոցական կեանքում առհասարակ, ուր տիրում է ծրագրային տեսակէտից մի կատարեալ քաոս։

Անցնելով առաջիկայ $^{908}/_{909}$ ուսումնական տարւայ նախահաշւին չենք կարող չընկատել, որ այն բոլոր թերութիւնները, որ նկատւած են նախորդ նախահաշիւների և հաշիւների մէջ, համարեա առանց բացառութեան կրկընւում են նրա մէջ—նոյնպէս մտցրած են իբրև հաստատ եկամուտ պարտքերը՝ թէ ղազախեցիների, թէ կրպակնե-

ըից պարտք մնացած, նոյնպէս դեֆիցիտի և դպրոցի պարտքը պակասեցնելու համար գումար չէ յատկացրած և այլն։

26 սեպտեմբերի 1908 թ.
Թիֆլիս։

Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրոցի
վերատեսուչ յանձնաժողովի

Նախագահ՝ բժ. Հ. Օհանջանեան

Անդամք { Բժ. Տ. Թաղէոսեան
Ս. Տանկերղեան

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0229937

51. 824